ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

__Հայոց լեզվի և գրականության__
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ՝ Բաբուոյան Հ. Ռ. /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __2__

«__12__» __սեպտեմբեր__ 2023 թ.

ՀԼԳ/բ-156 «ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-1» ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **011401.00.6** Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011401.19.6** Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ __Հայոց լեզվի և գրականության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ _____հեռակա_____
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ հեռակա ___5-րդ, 1-ին կիսամյակ_____

Դասախոս(ներ) ՝ _____Քրիստինա Ղազարյան_____
/անուն, ազգանուն/

Էլ. հասցե/ներ _____Kristinaghazaryan1979@gmail.com_____

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Ռուս գրականության պատմություն» դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը կազմված է բակալավրական կրթական ծրագրով «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության կրթական չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը: Այն ԿԾ-ի հետագա իրացման հիմնարար առարկաներից է:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Առարկան **նպատակ** ունի ուսանողներին գրական-գեղագիտական օրինաչափությունների մասին գաղափար տալ, հիմնարար պատկերացում ձևավորել, ռուսական գրական ընթացքի ընդհանուր իրազեկությանը զուգահեռ լրջորեն ուսումնասիրել 18-րդ և 19-րդ դարերի ռուս գրականության առաջատար դեմքերի հիմնական գործերը գրական ուղղությունները ու առանձնահատկությունները:
տման և մանկավարժական մեկնաբանության աշխատանքային հմտություններ:

2.2. Դասընթացի խնդիրներն են

- ռուս գրականության պատմություն առարկայի բովանդակության տիրապետում ուսանողների կողմից,
- ռուս գրականության հիմնական առանձնահատկությունների տիրապետումը ուսանողների կողմից,
- ձևավորել գրականության պատմության, ինչպես նաև ռուս դասականների նշանավոր ստեղծագործությունների, հանրահայտ մշակույթային հուշարձանների և գրական կոթողների բովանդակության իմացություն և վերլուծական ունակություններ,
- ձևավորել ռուս գրականության պատմության գաղափարական հարստության, դաստիարակիչ դերի վերհանում և ուսուցում ռուս գրողների նշանավոր ստեղծագործությունների արդիական նշանակության, գնահատման և մանկավարժական մեկնաբանության աշխատանքային հմտություններ:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

«Ռուս գրականության պատմություն-1» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների՝ դպրոցական դասագրքերում տեսական հարցերին առնչվող գիտելիքների, որոշ իրողություններ տարբերակելու հմտությունների առկայությունը:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների:

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

«Ռուս գրականության պատմություն-1» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

Կիմանան՝

- Առարկայի տեղը բանասիրական և մանկավարժական գիտությունների համակարգում.
- Ռուս գրականության համաշխարհային նշանակությունը, դասական գրական գործերի հավերժական կյանքը.
- Ռուս գրականության արդիական նշանակությունը.
- Ռուս գրականության զարգացման օրինաչափություններն ու պատմաշրջանները. նշանավոր գրական ստեղծագործությունների բովանդակությունն ու դերը ժամանակի մեջ, ժանրերի հերթագայությունը, պատմական ժամանակի առանձնահատկությունները:

Կկարողանան՝

- Ներկայացնել գրականության պատմության տարբեր շրջանների յուրահատկությունը.
- Տրամաբանորեն և հիմնավորված ձևակերպել իր մտքերը, կառուցել բանավոր և գրավոր խոսք, վերլուծել գեղարվեստական ստեղծագործությունը, տարբերել գրական ժանրերը, վերլուծել գրական ստեղծագործության գաղափարները, բերել համապատասխան օրինակներ, հիմնավորել իր ապացույցները.
- Հայտնաբերել գրական ստեղծագործության հիմնական գաղափարը.
- Օգտագործել ռուս գրականության գաղափարները անհատի դաստիարակության նպատակով:

Կտիրապետեն՝

- Գրականության հետազոտման մեթոդներին, մասնագիտական տերմինաբանությանը, գրական երկը ներկայացնելու, վերլուծելու հնարներին:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝
ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,
ԳԿ3 հենքային և ընդհանուր գիտելիքներ,
ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
ԳԿ8 տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն):

Միջանձնային կոմպետենցիաներ (ՄԳԿ)
ՄԶԿ1 քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,
ՄԶԿ6 բազմաձևության և բազմամշակութայնության ընդունում,
ՄԶԿ8 բարոյական արժեքներ:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)
ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն:

Առարկայական (մասնագիտական) կոմպենտենցիա (ԱԿ)
ԱԿ1 դրսևորել մասնագիտության պատմության և հիմունքների իմացություն,
ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
ԱԿ3 համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

ԱԿ5 հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների զարգացման մեթոդները:

5.Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Ռուս գրականության պատմություն-1» դասընթացից ձեռք բերված գիտելիքները և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մանկավարժական և բանասիրական մասնագիտական գործունեության ընթացքում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և բանասիրության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

5. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**2 կրեդիտ/60 ժամ**	**3 կրեդիտ/90 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ
Դասախոսություն	16	6
Գործնական աշխատանք	12	12
Ինքնուրույն աշխատանք	32	72
Ընդամենը	60	90
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	ստուգարք	ստուգարք

6. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները[4]</u> .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել:

[4] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության: Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
  - **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
  - **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
  - **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
  - **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

7. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

8. **Ուսումնառության մեթոդներն են՝** թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

---

[5] Թողնել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

9. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[6].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների		
		դասախոսություն	գործնական աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Ռուս ժողովրդի բանահյուսությունը	2	2	14
2.	Ռուս հին գրականություն		2	18
3.	18-րդ դարի ռուս գրականություն Ա. Ֆոնվիզին		2	18
4.	19-րդ դարի ռուս գրականություն Ա. Պուշկինի ստեղծագործությունը Մ. Լերմոնտովի ստեղծագործությունը Ն. Գոգոլի ստեղծագործությունը Ի. Գոնչարովի ստեղծագործությունը Ֆ. Դոստոևսկու ստեղծագործությունը Լ. Տոլստոյի ստեղծագործությունը Ա. Չեխովի ստեղծագործությունը	4	6	22
ԸՆԴԱՄԵՆԸ		6	12	72

[6] Նման է օրացուցային պլանին:

10. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Բիլինաներ, «Ասք Իգորի արշավանքի մասին»	
2.	Դ.Ֆոնվիզին «Տհասը»	
3.	Ի.Կռիլովի առակները	
4.	Ա.Գրիբոեդով «Խելքից պատուհաս»	
5.	Ա.Ս.Պուշկին ռոմանտիկական պոեմները , «Եվգենի Օնեգին»,«Բելկինի պատմվածքները», «Կապիտանի աղջիկը»	
6.	Մ.Յու.Լերմոնտով «Մեր ժամանակի հերոսը», «Դիմակահանդես», «Մծիրի» , «Դևը»	
7.	Ն.Վ.Գոգոլի «Հնաոճ կալվածատերերը», «Շինել», «Ռևիզոր», «Մեռած հոգիներ»	
8.	Ֆ. Դոստոևսկի «Ոճիր և պատիժ», «Ապուշը», «Կարամազով եղբայրներ»	
9.	Լ.Ն.Տոլստոյի «Աննա Կարենինա», «Պատերազմ և խաղաղություն»	
10.	Ա.Պ. Չեխովի «Իոնիչ», «Պատյանով մարդը», «Քամելեոն», «Հիվանդասենյակ №6», «Չինովնիկի մահը», «Քեռի Վանյա», «Բալենու այգին», «Երեք քույրեր»	
11.	Ա.Ոսկերչյան, Ռուս գրականություն: Ակնարկներ	Երևան, 1954
12.	Ա. Դեմենտև, Ռուս սովետական գրականություն	Երևան, 1973
13.	Ա. Ափինյան, Ակնարկներ 19-րդ դարի ռուս գրականության պատմության	Երևան, 2007, Ա և Բ գրքերը
14.	Ա. Ափինյան, Ակնարկներ 20-րդ դարի ռուս գրականության պատմության	Երևան, 2007, գիրք Գ
15.	История русской литературы в 4–х томах, Л., 1981, 1982	1981, 1982
16.	История русской литературы в 2–х томах, Л., 1969	1969
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Поспелов Г.Н. История русской литературы ХIХ века (1840 – 1860),	М.,1981
2.	История русской литературы ХIХ века (вторая половина). Под ред. С.М. Петрова,	М.,1978
3.	Кулешов В.И. История русской литературы ХIХ века (70–90–е гг.),	М.,1983
4.	Развитие реализма в русской литературе. 3–х томах, М., 1973, т.3,	М.,1974
5.	Лотман Л.М. Реализм русской литературы 60–х гг. ХIХ в., Л.,	М.,1974

11. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

11.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[7]
1.	Ռուս ժողովրդի բանահյուսությունը	**Ռուս ժողովրդի բանահյուսությունը** որպես նրա ինքնատիպ մշակույթի բաղկացուցիչ մասը, ռուս գրականության հիմնական աղբյուրներից մեկը: **Բիլինաները** որպես ռուս ժողովրդի էպոսն ու պարծանքը, որոնք ունեն համաշխարհային նշանակություն: Բիլինաների ծագման ու դասակարգման պրոբլեմը: Դարաշրջանի առաջադեմ գաղափարների, հայրենասիրության, հերոսականության և հումանիզմի արտահայտությունը բիլինաներում:	2	ՊԳ1, ՊԳ11, ՊԳ15, ՊԳ16
2.	Ռուս հին գրականություն	**Ռուս հին գրականության պարբերացումը՝** 1. Կիևյան Ռուսիայի գրականություն (11-13-րդ դ.դ.) 2. Ֆեոդալական մասնատվածության և հյուսիս-արևելյան Ռուսիայի միավորման շրջանի գրականություն (13-15-րդ դ.դ.) 3. Ռուսական կենտրոնացված պետականության ստեղծման շրջանի գրականություն (15-17-րդ դ.դ.): **Տարեգրությունը** որպես գրական հուշարձան: Համահավաք տարեգրությունների ծագումը տեղական տարեգրությունների, տարեգրային գրառումների, բանավոր ավանդությունների և իրավաբանական երկերի հիման վրա: **«Ասք Իգորի արշավանքի մասին»** հերոսապատումը: Նրա հայտնագործումն ու հրատարակումը: Հեղինակի հարցը և ստեղծագործելու ժամանակաշրջանը:		ՊԳ1, ՊԳ11, ՊԳ15, ՊԳ16
3.	18-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել 18-րդ դարի ռուս գրականության գաղափարական-գեղարվեստական արժեքը: Ա.Դ.Կանտեմիրի և Մ.Վ.Լոմոնոսովի գրական գործունեությունը:		ՊԳ11, ՊԳ15, ՊԳ16
4.	18-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել Դ.Ի.Ֆոնվիզին կյանքը և գրական գործունեությունը: Վաղ շրջանի երգիծական գործերը: «Տհասի» հիմքում ընկած սոցիալական կոնֆլիկտը և գլխավոր կերպարների բնութագրությունը: Անդրադառնալ ռուսական սենտիմենտալիզմի ինքնատիպությանը և նրա հիմնական առանձնահատկություններին:		ՊԳ2, ՊԳ11, ՊԳ15, ՊԳ16

[7] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

5.	19-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել 19-րդ դարի ռուս գրականության ընդհանուր բնութագիրը: Վ. Ժուկովսկու, Ի. Կռիլովի ստեղծագործության հիմնական բնութագիրը:		ՊԳ3, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
6.	19-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել Ա.Ս. Պուշկինի կյանքը և ստեղծագործությունը: Հարավային աքսորի շրջանը: «Եվգենի Օնեգին» չափածո վեպը: Անդրադառնալ Պուշկինի բանաստեղծություններին պոետի և ամբոխի մասին:		ՊԳ5, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
7.	19-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել Լերմոնտովի կյանքը և ստեղծագործությունը: Անտարբեր սերնդի քննադատության մոտիվը Լերմոնտովի պոեզիայում:		ՊԳ6, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
8.	19-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել ժողովրդական կյանքի, կենցաղի, եռանդի ու խիզախության արտացոլումը Գոգոլի «Երեկոներ Դիկանկայի մերձակա խուտորում» ժողովածուի մեջ: Ռեալիստական միտումների ուժեղացումը «Միրգորոդ» ժողովածուում:		ՊԳ7, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
9.	19-րդ դարի ռուս գրականություն	Սոցիալական հակասությունների պատկերը Պետերբուրգյան վիպակներում»: «Ռևիզոր» կատակերգությունը որպես քաղաքական սուր երգիծանք: «Շինելը» վիպակի թեման: «Մեռած հոգիներ» պոեմի գաղափարը:		ՊԳ7, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
10.		Ներկայացնել Ֆ.Մ. Դոստոևսկու ստեղծագործության բարդ, հակասական բնույթը: Դոստոևսկու կյանքի և ստեղծագործության վաղ շրջանը: Բացահայտել մարդկային անլուր տառապանքների ցնցող տեսարանները և տառապանքի, համբերության պաշտամունքը: Անդրադառնալ Դոստոևսկու գրական ժառանգության շուրջը մղվող գաղափարական պայքարին: Ներկայացնել Կարամազով եղբայրներ վեպը:		ՊԳ8, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
11.	19-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել Լ.Ն. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» հայրենասիրական-հերոսական էպոպեան: Բացահայտել հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ Տոլստոյի հայացքները և էպոպեայի կանանց կերպարները /Նատաշա Ռոստովա, Մարիա Բոլկոնսկայա, Էլեն և ուրիշներ/: Անդրադառնալ սիրո, ամուսնության և ընտանիքի պրոբլեմներին «Աննա Կարենինա» վեպում: Տոլստոյի հոգեկան-փիլիսոփայական որոնումները և Լևինի կերպարը:	4	ՊԳ9, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
12.	19-րդ դարի ռուս գրականություն	Ներկայացնել Ա. Պ. Չեխովին որպես 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի քննադատական ռեալիզմի խոշորագույն ներկայացուցիչ և նովելի ու դրամայի ժանրերի ականավոր վարպետներից մեկը: Անդրադառնալ վաղ շրջանի հումորիստական և երգիծական նովելների գեղարվեստական առանձնահատկությունները: Բացահայտել Չեխովի ստեղծագործության համաշխարհային նշանակությունը:		ՊԳ10, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2

11.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

h/h	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[8]
1.	Ռուս հին գրականություն	Սկզբնական ռուսական տարեգրություն՝ «Անցած տարիների պատմություն»: Նրա լավագույն խմբագրությունները՝ Լավրենտյան և Իպատյան, բովանդակությունը, առանձին հատվածների գեղարվեստական արժեքը: «Ասքի» գեղարվեստական առանձնահատկությունները՝ կառուցվածքը, խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցները: Գլժավոր կերպարների բնութագրումը:	2	Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ1, ՊԳ11, ՊԳ15, ՊԳ16
2.	18-րդ դարի ռուս գրականություն	Ռուսական կլասիցիզմի ձևավորումը և առանձնահատկությունները: Ա.Դ.Կանտեմիրի սատիրաների ինքնուրույնությունը և թեմատիկ հարստությունը: Լոմոնոսովի դերը ռուսական գրական լեզվի զարգացման գործում:	2	Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ11, ՊԳ15, ՊԳ16
3.	18-րդ դարի ռուս գրականություն	Ն.Մ. Կարամզինը որպես ռուս ազնվականական սենտիմենտալիզմի պարագլուխ: Կարամզինի վիպակները:	2	Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ2, ՊԳ11, ՊԳ15, ՊԳ16
4.	19-րդ դարի ռուս գրականություն	Ա.Ս.Գրիբոյեդովի ստեղծագործության հասարակական նշանակությունը: «Խելքից պատուհասը» իբրև ռուսական ռեալիստական դրամատուրգիայի գագաթ:	6	Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ3, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
5.	19-րդ դարի ռուս	Ա.Ս.Պուշկինի ռոմանտիկական պոեմները «Կովկասի գերին» «Բախչիսարայի շատրվանը», «Գնչուներ»:		Բանավոր հարցում,	ՊԳ5, ՊԳ11, ՊԳ13,

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

	գրականություն	Պուշկինը իբրև ռուսական ռեալիզմի հիմնադիր: Անհատականության և պետության պրոբլեմը «Պոնձե հեծյալը» պոեմում: Պուշկինի արձակը «Բելկինի պատմվածքները» «Կապիտանի աղջիկը»		խմբային քննարկում	ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
6.	19-րդ դարի ռուս գրականություն	Լերմոնտովի «Դևը» պոեմը: «Դիմակահանդես» դրամայի փիլիսոփայությունը: Կյանքի խորհուրդը Լերմոնտովի «Մծիրի» պոեմում: «Մեր ժամանակի հերոսը» վեպը:		Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ6, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
7.	19-րդ դարի ռուս գրականություն	Սոցիալական հակասությունների պատկերը «Պետերբուրգյան վիպակներում»: «Ռևիզոր» կատակերգությունը որպես քաղաքական սուր երգիծանք: «Շինելը» վիպակի թեման: «Մեռած հոգիներ» պոեմի գաղափարը:		Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ7, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
8.	19-րդ դարի ռուս գրականություն	Ի.Ա. Գոնչարովը որպես ռեալիստական արձակի ականավոր ներկայացուցիչներից մեկը: «Օբլոմով» հակաճորտատիրական վեպը:		Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ7, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
9.	19-րդ դարի ռուս գրականություն	Շահագործման վրա հիմնված հասարակարգի աղաղակող հակասությունների պատկերումը «Ոճիր և պատիժ», «Ապուշը» վեպերում: Ընդվզման և խոնարհության պրոբլեմը Դոստոևսկու ստեղծագործություններում: «Գազազած և հեզ» մարդկանց կերպարները /Ռոսկոլնիկով և Սոնյա Մարմելադովա, Նատալյա Ֆիլիպովնա և Միշկին/:		Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ8, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2
10.	19-րդ դարի ռուս գրականություն	Ժողովուրդը որպես «Պատերազմ և խաղաղություն» վեպի գլխավոր հերոս: Անդրեյ Բոլկոնսկու և Պիեռ Բեզուխովի կերպարները: Աննա Կարենինայի ողբերգությունը, հասարակության և ընտանիքի հետ նրա կոնֆլիկտի խորությունը, կործանման պատճառները:		Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ9, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2

11.	19-րդ դարի ռուս գրականություն	Գրական գործունեության սկիզբը 1880-ական թվականներին, երգիծական նովելի ժանրի միջոցով ստրկամտության և ստորաքարշության, շողոքորթության և քաղքենական ճղճիմության, գռեհկության և մարդկային արժանապատվության նսեմացման մերկացումը / «Չինովնիկի մահը», «Քամելեոն», և այլն/: Ցարիզմի կողմից արմատավորվող բռնակալական ռեժիմի և բյուրոկրատական համակարգի սուր քննադատությունը /»Պատենավոր մարդը», «Հաղարջենի», «Հիվանդասենյակ N 6»/: Աշխատանքի գեղեցկության, երջանկության հակադրումը քաղքենիական ճղճիմությանը / «Շնիկով տիկինը», «Թռվռանը», «Ճայը», «Քեռի Վանյա», «Երեք Քույր»/: Կապիտալիզմի գրոհի հետևանքով ազնվականության անկման պատկերումը «Բալենու այգի» պիեսում:		Բանավոր հարցում, խմբային քննարկում	ՊԳ10, ՊԳ11, ՊԳ13, ՊԳ15, ՊԳ16, ԼԳ2

12. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[9]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	-
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	
Համակարգչային ծրագրեր	
Այլ	

[9] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

13. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[10]:

13.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ամփոփիչ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

13.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող ամփոփիչ ստուգման և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով[11]:

---

[10] «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.):

[11] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

13.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Ռուս հին գրականությունը և բանահյուսությունը
2. «Ասք Իգորի արշավանքի մասին» երկի գեղարվեստական առանձնահատկությունները՝ կառուցվածքը, խոսքի պատկերավորման և արտահայտչական միջոցները
3. Դ.Ֆոնվիզիզնի «Տհասը» ստեղծագործության հիմքում ընկած սոցիալական կոնֆլիկտը և գլխավոր կերպարների բնութագրությունը
4. Ա.Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» պիեսի պրոբլեմատիկան
5. Ա.Ս.Պուշկինի ռոմանտիկական պոեմները
6. Ա.Ս.Պուշկինի «Եվգենի Օնեգին» չափածո վեպի յուրահատկությունը և գլխավոր հերոսների կերպարները
7. Ա.Ս.Պուշկինի «Բելկինի պատմվածքները»
8. Ա.Ս.Պուշկինի «Կապիտանի աղջիկը» վիպակի գլխավոր պրոբլեմատիկան
9. Ա.Ս.Պուշկինի «Փոքրիկ ողբերգությունների» գեղարվեստական ինքնատիպությունը
10. Մ.Յու.Լերմոնտովի «Մեր ժամանակի հերոսը» որպես սոցիալ-հոգեբանական վեպ
11. Մ.Յու.Լերմոնտովի քնարերգության հիմնական մոտիվները
12. Մ.Յու.Լերմոնտովի «Դիմակահանդես» դրաման
13. Մ.Յու.Լերմոնտովի «Մծիրի» պոեմը
14. Մ.Յու.Լերմոնտովի «Դևը» պոեմը
15. Ն.Վ.Գոգոլի «Ռեվիզոր» կատակերգություն պրոբլեմատիկան
16. Ֆ.Մ. Դոստոևսկու «Խեղճ մարդիկ» վիպակը: «Փոքր մարդու» թեմայի զարգացումը դարի ռուս գրականության մեջ
17. Ընդվզման և խոնարհության պրոբլեմը Դոստոևսկու ստեղծագործություններում
18. Լ.Ն.Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպի պրոբլեմատիկան և գլխավոր հերոսների կերպարները
19. Ա.Պ. Չեխովի վիպակների գեղարվեստական առանձնահատկությունները
20. Ազնվականության անկման պատկերումը Ա.Պ. Չեխովի «Բալենու այգի» պիեսում

13.4. Գնահատման չափանիշները.

- Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ ստուգման ժամանակ :
- Գործնական աշխատանքները՝ նվազագույնը երկու հարցում՝ 20-ական միավոր գնահատմամբ.:
- Ինքնուրույն աշխատանքը՝ մեկ հարցում՝ 20 միավոր գնահատմամբ:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ **011401.00.6** Մասնագիտական մանկավարժություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011401.19.6** Հայոց լեզու և գրականություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Հեռակա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՀԼԳ/բ-156 «ՌՈՒՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	3 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	5-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	18	Դասախոսություն	6
			Գործնական աշխատանք	12
	Ինքնուրույն	72		
	Ընդամենը	90		
Ստուգման ձևը	ստուգարք			
Դասընթացի նպատակը	Առարկան **նպատակ** ունի ուսանողներին գրական-գեղագիտական օրինաչափությունների մասին գաղափար տալու, հիմնարար պատկերացում ձևավորելու: Ռուսական գրական ընթացքի ընդհանուր իրազեկությանը զուգահեռ լրջորեն ուսումնասիրել 18-րդ և 19-րդ դարերի ռուս գրականության առաջատար դեմքերի հիմնական գործերը, գրական ուղղությունները ու առանձնահատկությունները:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. **Կիմանան՝** • Առարկայի տեղը բանասիրական և մանկավարժական գիտությունների համակարգում • Ռուս գրականության համաշխարհային նշանակությունը, դասական գրական գործերի հավերժական կյանքը • Ռուս գրականության արդիական նշանակությունը • Ռուս գրականության զարգացման օրինաչափություններն ու պատմաշրջանները, նշանավոր գրական ստեղծագործությունների բովանդակությունն ու դերը ժամանակի մեջ, ժանրերի հերթագայությունը, պատմական ժամանակի առանձնահատկությունները: **Կկարողանան՝** • Ներկայացնել գրականության պատմության տարբեր շրջանների յուրահատկությունը; • Տրամաբանորեն և հիմնավորված ձևակերպել իր մտքերը, կառուցել բանավոր և գրավոր խոսք, վերլուծել գեղարվեստական ստեղծագործությունը, տարբերել գրական ժանրերը, վերլուծել գրական ստեղծագործության գաղափարները, բերել			

	համապատասխան օրինակներ, հիմնավորել իր ապացույցները; • Հայտնաբերել գրական ստեղծագործության հիմնական գաղափարը; • Օգտագործել ռուս գրականության գաղափարները անհատի դաստիարակության նպատակով: **Կտիրապետեն՝** • Գրականության հետազոտման մեթոդներին, մասնագիտական տերմինաբանությանը, գրական երկը ներկայացնելու, վերլուծելու հնարներին:
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. 18-րդ դարի ռուս գրականություն Թեմա 2. Ա. Ֆոնվիզին Թեմա 3. 19-րդ դարի ռուս գրականություն Թեմա 4. Ա. Պուշկինի ստեղծագործությունը Թեմա 5. Մ. Լերմոնտովի ստեղծագործությունը Թեմա 6. Ն. Գոգոլի ստեղծագործությունը Թեմա 7. Ի. Գոնչարովի ստեղծագործությունը Թեմա 8. Ֆ. Դոստոևսկու ստեղծագործությունը Թեմա 9. Լ. Տոլստոյի ստեղծագործությունը Թեմա 10. Ա. Չեխովի ստեղծագործությունը
Գնահատման մեթոդները և չափանիշները	Բանավոր հարցում, թեստային աշխատանք, բնագրային վերլուծություն, ինքնուրույն աշխատանքի ստուգում: Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ ստուգման ժամանակ : Գործնական աշխատանքները՝ նվազագույնը երկու հարցում՝ 20-ական միավոր գնահատմամբ.: Ինքնուրույն աշխատանքը՝ մեկ հարցում՝ 20 միավոր գնահատմամբ:
Գրականություն	**Պարտադիր** Բիլինաներ, «Ասք Իգորի արշավանքի մասին» Դ.Ֆոնվիզին «Տհասը» Ի.Կռիլովի առակները Ա.Գրիբոեդով «Խելքից պատուհաս» Ա.Ս.Պուշկին ռոմանտիկական պոեմները , «Եվգենի Օնեգին»,«Բելկինի պատմվածքները», «Կապիտանի աղջիկը» Մ.Յու.Լերմոնտով «Մեր ժամանակի հերոսը», «Դիմակահանդես», «Մծիրի» , «Դևը» Ն.Վ.Գոգոլի «Հնաոճ կալվածատերերը», «Շինել», «Ռևիզոր», «Մեռած հոգիներ» Ֆ. Դոստոևսկի «Ոճիր և պատիժ», «Ապուշը», «Կարամազով եղբայրներ» Լ.Ն.Տոլստոյի «Աննա Կարենինա», «Պատերազմ և խաղաղություն» Ա.Պ. Չեխովի «Իոնիչ», «Պատյանով մարդը», «Քամելեոն», «Հիվանդասենյակ №6», «Չինովնիկի մահը», «Քեռի Վանյա», «Բալենու այգին», «Երեք քույրեր» 1. Ա.Ոսկերչյան, Ռուս գրականություն: Ակնարկներ, Երևան, 1973

	2. Ա. Դեմենտև, Ռուս սովետական գրականություն, Երևան, 1954 3. Ա. Ափինյան Ակնարկներ 19-րդ դարի ռուս գրականության պատմության, Երևան, 2007, Ա և Բ գրքերը 4. Ա. Ափինյան Ակնարկներ 20-րդ դարի ռուս գրականության պատմության, Երևան, 2007, գիրք Գ 5. История русской литературы в 4–х томах, Л., 1981, 1982 6. История русской литературы в 2–х томах, Л., 1969 **Լրացուցիչ** Поспелов Г.Н. История русской литературы ΞIΞ века (1840 – 1860), М.,1981 История русской литературы ΞIΞ века (вторая половина). Под ред. С.М. Петро ва, М., 1978 Кулешов В.И. История русской литературы ΞIΞ века (70–90–е гг.), М., 1983 Развитие реализма в русской литературе. 3–х томах, М., 1973, т.3, М., 1974 Лотман Л.М. Реализм русской литературы 60–х гг. ΞIΞ в., Л., 1974